ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Անալիտիկ» ՓԲԸ 2018թ. տարեկան
ընդհանուր ժողովի (Բաժնետիրոջ) որոշման

ք. Երևան **28.06.2019թ.**

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Ս.Պապիկյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար՝ ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնող 100% ձայնի իրավունքով
Բ. Գյուլումյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Հ.Բատիկյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության իրավաբանական բաժնի պետ
Կ.Թորոսյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աուդիտի բաժնի պետ
Ժ.Հարությունյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ
Լ.Փաշայան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության իրավաբանական վարչության դատաիրավական բաժնի գլխավոր մասնագետ, ժողովի քարտուղար
Ս.Սարգսյան	«Անալիտիկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Վ.Իսոյան	«Անալիտիկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) գլխավոր հաշվապահ

Ժողովի նախագահ Ս.Պապիկյան
Ժողովի քարտուղար Լ.Փաշայան

1. Ընկերություն 2018թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:
2. Ընկերության վերստուգողի (աուդիտի) եզրակացության ներկայացում:
3. Ընկերության 2018թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
4. Ընկերության 2018թ. տարեկան շահույթի հաշվի հաստատում:
5. Ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման չափի հաստատում:

ՀԱՐՑ 1

Լսվեց Ընկերության 2018թ. ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը (կցվում է):

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՀԱՐՑ 2

Ներկայացվեց Ընկերության վերստուգողի (աուդիտի) եզրակացությունը (կցվում է):

Ներկայացնող-Կ.Թորոսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ի գիտություն ընդունելով վերստուգողի (աուդիտի) եզրակացությունը, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հաստատել «Անալիտիկ» ՓԲ ընկերության 2018թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը:

ՀԱՐՑ 3

Լսվեց Ընկերության 2018թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատման հարցը (կցվում է):

Զեկուցող- Ս.Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հիմք ընդունելով Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ գլխավոր տնօրենի հաշվետվությունը և վերստուգողի (աուդիտի) եզրակացությունը, հաստատել Ընկերության 2018թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը:

ՀԱՐՑ 4

Լսվեց Ընկերության 2018թ. շահույթի հաշվի հաստատման հարցը (տեղեկանքը կցվում է):

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հաստատել Ընկերության 2018թ. տարեկան զուտ շահույթը՝ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո 10585.0 հազ. դրամ և զուտ շահույթը՝(վնասը) հաշվի առած ավելացումները (շահութաբաժնի հաշվարկի 060 տող) 11026.0 հազ. դրամ:

ՀԱՐՑ 5

Լսվեցին Ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժնի վճարման չափի հաստատման հարցերը (առաջարկությունը կցվում է):

Զեկուցող- Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հաստատել Ընկերության 2018թ. տարեկան զուտ շահույթի բաշխումը հետևյալ համամասնությամբ.

ՀՀ կառավարության 03.03.2011թ. թիվ 202-Ն որոշման համաձայն, զուտ շահույթի (հաշվի առած ավելացումները) 50 %-ը՝ 5513.0 հազ. դրամը փոխանցել պետբյուջե, որպես պետական մասնակության դիմաց շահութաբաժին.

զուտ շահույթի 5 %-ը՝ 529.0 հազ. դրամն հատկացնել Ընկերության պահուստային հիմնադրամին.

Զուտ շահույթի մնացած՝ 4543.0 դրամը դրամը (10585-5513-529) թողնել որպես չբաշխված շահույթ:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ս.ՊԱՊԻԿՅԱՆ**

ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Լ.ՓԱՇԱՅԱՆ**